Կարծիք

Բենիկ Վարդանի Վարդանյանի "Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի բնակչության սոցիալական կազմը և թաղման ծեսն ըստ ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան դամբանային համալիրների" Է.00.03 "Հնագիտություն" մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հրապարակային պաշտպանության ներկայացված Բ.Վարդանյանի աշխատանքը նվիրված է Հայաստանի և Հարավային Կովկասի հնագիտության ավանդական, բայց և այնպես արդիական թեմային, որի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով: Առաջին հերթին, դա ուշ բրոնզ – վաղ երկաթեդարյան հնագիտության աղբյուրագիտական հենքի վիճակն է, որն առավելապես ներկայացված է դամբարանային համալիրներով: Բացի այդ, հատկապես այս ժամանակահատվածի համար առավելագույնս տեսանելի են կոմպլեքսային հասարակության և վաղ պետական կազմավորումների ձևավորման սոցիալ-տնտեսական գործընթացները: Դրանով էլ պայմանավորված հրապարակի վրա ունենք զգալի քանակության ուսումնասիրություններ, որոնցում այս կամ այն չափով շոշափվում են ներկայացված թեմայի տարբեր ասպեկտները: Այնուամենայնիվ, դրանց միայն մի մասն է մեթոդապես բավականին հիմնավորված: Այս տեսանկյունից, Բ.Վարդանյանի ատենախոսական աշխատանքը առանձնանում է ինքնատիպությամբ, հետաքրքիր է և արժանի բարձր գնահատանքի:

Աշխատանքի կառուցվածքը.

Աշխատանքի ընդհանուր ծավալը 288 էջ է: Այն բաղկացած է բուն շարադրանքից (180 էջ), գրականության տպավորիչ՝ 423 անուն պարունակող ցանկից, պատկերների և աղյուսակների հավելվածներից: Աշխատանքի հիմնական բովանդակությունը ամփոփված է երեք գլուխներում՝ Գլուխ 1. Հին Հայաստանի ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման ծեսի վերակազմության խնդիրները, Գլուխ 2. Ուշ բրոնզ և վաղերկաթե-

դարյան հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրման խնդիրները, Գլուխ 3. Ուշ բրոնզ և վաղերկաթեդարյան թաղման գույքի ուսումնասիրության խնդիրները, որոնք բաժանված են բաժինների և ենթաբաժինների: Ընդհանուր առմամբ, գլուխներն ու բաժինները ընդգրկում են հետազոտության գրեթե բոլոր կողմերը, բայց դրանց կարգը կարծես թե միշտ չէ, որ տրամաբանական է: Այսպես օրինակ, մի շարք զտածոների գործառույթները և դրանց ծիսական իմաստը ներկայացվում է երրորդ գլխում, մինչդեռ արդեն իսկ երկրորդ գլխում վերջիններիս կրողները ստանում են այս կամ այն կարգավիճակը, որը սակայն շատ դեպքերում պայմանավորված էր հատկապես ուղեկցող նյութի նշանակությամբ:

Իմ կարծիքով, "Ուսումնասիրության կատարման մեթոդաբանական հիմքը", և, միգուցե՝ "Հիմնախնդրի ուսումնասիրության վիճակը" ներածության բաժինները հարկավոր էր ներկայացնել առանձին գլխում: Բոլոր դեպքերում, "Հիմնախնդրի ուսումնասիրության վիճակը" բաժինը պետք է նախորդի "Ուսումնասիրության կատարման մեթոդաբանական հիմք"-ին և ներառի նաև նախորդ ուսումնասիրությունների մեթոդաբանության մանրամասն քննական վերլուծությունը:

Աղբյուրագիտական հենքը.

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի և Հարավային Կովկասի ուշ բրոնզ – վաղ երկաթեդարյան հուշարձանների հետազոտման առկա վիճակը օբյեկտիվորեն բոլոր անհրաժեշտ նախադրյալներն է ստեղծում հեղինակի կողմից առաջադրված խնդրի հաջող իրականացման համար: Միևնույն ժամանակ, պեղումների տարբեր մեթոդները, ոչ լիարժեք հրապարակումները և, հաճախ, անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը, բնականաբար, ստիպում են աղբյուրագիտական հենքը ձևավորելիս ընտրողական մոտեցում ցուցաբերել: Սակայն հուշարձանների ընտրության սկզբունքը միշտ չէ, որ ակներև է: Թաղման ծեսի հատկանիշների աղյուսակի կազմման համար հեղինակն օգտագործել է Հայաստանի տարածքի ուշ բրոնզ – վաղ երկաթի դարի 21 դամբարանադաշտերի տվյալները, որոնցում, անհասկանալի պատճառներով, ներկայացված չեն ո՛չ Արթիկը, ո՛չ Քարաշամբը, ո՛չ Հոռոմը (էջ 9-10), թեև տեքս-

տում այդ հուշարձանների համապատասխան տվյալները հետագայում ակտիվորեն օգտագործվում են: Ձևաբանեցման համար օգտագործված դամբարանադաշտերի ընտրության հիմքում դրվել է դամբարանների քանակը, որոնց նվազագույն ընդունելի շեմը 10 դամբարան է:

Արդյունքում, 12 դամբարանադաշտի 561 դամբանների ընտրանին, անշուշտ, շատ ներկայացուցչական է և հուսալի վիճակագրության շնորհիվ ապահովում է եզրակացությունների մեծ մասի օբյեկտիվությունը:

Մեթոդաբանական հենքը.

Մեթոդաբանական սկզբունքներին աշխատանքում նվիրված է ընդամենը հինգ էջ (էջ 9-14): Այնուամենայնիվ, եթե ոչ բաժինն ինքնին, ապա ատենախոսության մեջ Գենինգի, Գենինգի և Բորզունովի մեթոդի կիրարման հետևողականությունը, մոտեցումների միօրինակությունը և ընտրված մեթոդին խիստ հետևելը պայմանավորում են տվյալ ատենախոսական աշխատանքի բարձր գիտական մակարդակը և գիտական արժեքը: Սա ավանդական, հարկադիր սուբյեկտիվ և հաճախ միայն քանակական տվյալների կամ էլ ազգագրական զուգահեռների վրա հիմնված գնահատականներից դեպի վիճակագրորեն հաստատված և մեծ թվով (495)՝ բավականին բարձր օբյեկտիվության աստիճան ունեցող, հատկանիշների վրա հիմնված ցուցանիշներին անցնելու շատ լավ օրինակ է: Հեղինակի կողմից այդ հատկանիշների հիման վրա կազմված՝ Հավելված 2-ը և առանձին դրույթները նկարագրող աղյուսակները (1 – 23), 1 - 21 գծապատկերները ծայրաստիճան օգտակար և տեղեկատվական հենք են, կազմման սկզբունքներով զուգահեռ չունեն մեր գրականության մեջ և, իմ կարծիքով, ինքնին շատ արժեքավոր աշխատանք են:

Սակայն, մի շարք պատճառներով, հեղինակը սահմանափակվել է նյութի ընտրությամբ, որի պատճառով բազմաթիվ հատկանիշների զուգահեռները լիարժեք չեն, ինչը իր հերթին ազդել է տվյալների մեկնաբանության վրա: Արդյունքում, որոշ դեպքերում հեղինակին չի հաջողվել թաղման ծեսի և կառույցների որոշ հատկանիշների դասակարգումը և խմբավորումը, ինչպես նաև մի շարք իրերի

տիպաբանությունը: Այսպես, երկ- և բազմախուց թաղման կառույցները ուսումնասիրելիս, հեղինակը նշում է միայն Լճաշենը և Ծաղկալանջը (էջ 26), անտեսելով Հոռոմի, Գեղարոտի և Քանագեղի հրատարակված տվյալները (համապատասխան հրապարակումները բացակայում են նաև գրականության ցանկում): Երկրորդական կառույցների շարքում նշված են միայն երկու տիպեր՝ կրոմլեխին արտաքինից կցված խուց և դամբարանախցի ներսում խորշ (էջ 33): Ըստ երևույթին, հեղինակը համարում է կրոմլեխին ներսից կցված խցերը երկ- և բազմախցանի թաղման կառույցների օրինակ, բայց անտեսում է դրանց տարբեր նշանակության հանգամանքը:

Թվում է, թե առաջին հերթին պետք էր կատարել խցերի պարունակության և նշանակության վերլուծությունը դամբարանի ամբողջ համատեքստում, ապա արդյունքների հիման վրա կատարել կառույցների տիպաբանությունը: Այս դեպքում Գեղարոտի դամբանաթումբ 2-ի կրոմլեխին ներսից կցված խուցը չէր ստանա "սրբազան կենդանու" թաղման կարգավիճակ (էջ 44, կրկնությունը՝ էջ 139), այլ կստանար ավելի ռեալիստական բնութագրություն՝ ուղեկցող գույքի և զոհաբերված կենդանիների պահոց:

Մի շարք արտեֆակտների տեսակների գործառույթների վերակազմությունները միշտ չէ, որ բավականաչափ հիմնավորված են, ինչպես, օրինակ, կեռերի դեպքում (էջ 115): Վերջիններիս բաժանումը կենցաղային, իշխանության խորհրդանիշների և նվիրատվականների՝ ներկայացվում է որպես ակներևություն, առանց բավարար հիմնավորման (միայն վերջին խմբի համար հիմնավորում կարող են հանդիսանալ փոքր չափերը): Ուշ բրոնզեդարյան այնպիսի նշանակալի արտեֆակտների տեսակը, ինչպիսիք են շտանդարտները, ներկայացվում են միայն pars pro toto տեսանկյունից, ընդ որում հեղինակը պնդում է, որ ավելի քան երեսուն նմանօրինակ իրերից միայն երեքն են (Արթիկ 3, Վերին նավեր 14 և Քուչակ 31) արտացոլում են տվյալ սկզբունքը (էջ 160): Պարզ չէ, թե ինչու այս տեսակի մեջ չեն մտել բոլոր առումներով նույնանման Արթիկի N 79 (Хачатрян Т. 1979), Մեծամորի X (Khanzadian E. 1995), Շիրակավանի N

17 (Թորոսյան Ռ.Մ., Խնկիկյան Օ.Ս., Պետրոսյան Լ.Ա. 2002), Գեղարոտի N 3 (Badalyan R.S., Smith A.T. 2017) դամբարանները:

Նման թեմայով աշխատանքում լիովին անհասկանալի է ուշ բրոնզեդարյան այնպիսի սոցիալապես նշանակալի արտեֆակտների տեսակի անտեսումը, ինչպիսիքն են միտանական (և միտանական տիպի) գլանաձև կնիքները:

Անհասկանալի է հեղինակի ցանկությունը ներխուժել իր առարկայի հետ անմիջականորեր չառնչվող ոլորտները, որտեղ նա փաստացի սխալներ է թույլ տալիս: Դրանց շարքում է, մասնավորապես, այն պնդումը, որ "Եռոտանի անոթների վաղագույն օրինակները մեզ հայտնի են վաղ կատակոմբային մշակույթում..." (էջ 148), "...եռոտանի անոթները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում հայտնվում են առնվազն մ.թ.ա. XX դարում..." (էջ 150), մինչդեռ հնագույն եռոտանի անոթները Հայաստանում հայտնի էին առնվազն հազար տարի առաջ, կուր-արաքսյան մշակույթի վաղ և ուշ համալիրներում՝ Լճաշեն, Մոխրաբլուր, Գեղարոտ, Ամիրանիս-գորա:

Շարադրության թերությունների շարքին պետք է դասել բազմաթիվ կրկնողությունները, այդ թվում բառացիորեն, ամբողջ պարբերություններ (օրինակ՝ բազմափող անոթների դասակարգումը էջ 130 ամբողջությամբ կրկնվում է գլխի եզրակացությունում՝ էջ 168, Արթիկի N 640 դամբարանի նկարագրությունը բառացիորեն կրկնվում է էջեր 109 և 113-ում): Ութ էջ (էջ 101 – 108) տրամադրվել է "Կաշեգործություն, մանածագործություն" գլխին, որտեղ մանրամասնորեն ներկայացվում է Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանի պատահական համալիրների նկարագրությունը՝ լիարժեք գովասանքի արժանի, սակայն միանգամայն անտեղի, ինչը հանգեցնում է ծավալի չարդարացված աճի: Ստուգված չեն տեղանունները՝ Խանքենդի (էջ 49), Լենինական (էջ 123): Կան սխալ հղումներ՝ Badalyan, Smith 2009 (էջ 131)՝ պարզ չէ, թե ինչի մասին է խոսքը, գրականության ցանկում նման աշխատություն չկա: Անհարկի ենք համարում տարածաշրջանից դուրս առանձին զուգահեռներին անդրադարձը՝ Բակտրիա-Մարգիանա (էջ 44), Չուկոտկա (էջ 51), Վերին Օբ (էջ106):

Ընդհանուր առմամբ, ատենախոսական աշխատանքում հեղինակը դրսևորել է գրականության (ինչպես նշվել է, ցանկում բերված են 423 աշխատանքներ մի քանի լեզուներով), թանգարանային հավաքածուների լավ իմացություն և դրանց բավականին պրոֆեսիոնալ օգտագործում, բայց ամենից առաջ, խիստ մեթոդաբանություն, որի հետևողական օգտագործումը ապահովել է աշխատանքի իրոք գիտական մակարդակը:

Բ.Վարդանյանի ատենախոսությունն ինքնուրույն ավարտուն գիտական աշխատանք է, որն ունի թե տեսական, թե գործնական նշանակություն, և որի եզրահանգումները կարող են նպաստել Հայաստանի ուշ բրոնզ – վաղ երկաթի դարաշրջանի հետագա ուսումնասիրությանը:

Հեղինակի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Գտնում եմ, որ թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի "Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի" պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին Բենիկ Վարդանի Վարդանյանին շնորհել Է.00.03 "Հնագիտություն" մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, վաղ հնագիտության բաժնի վարիչ, պատ. գիտությունների դոկտոր՝
Ռուբեն Սերգեյի Բաղալյան

Ռ.Ս.Բաղալյանի կարծիքը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի տեղակալ՝
Ա.Ա.Բորոխյան _____